

«ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱԿ



STATE COMMITTEE
OF WATER ECONOMY OF THE
RA MINISTRY OF TERRITORIAL
ADMINISTRATION
CHAIRMAN

«Վ. Երևան 0010, Վարդանանց 13ա
Վեբ: (374 10) 540 909, ֆաքս: (374 10) 540 603
Էլ. փոստ: scwe@scws.am, scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 603
E-mail: scwe@scws.am, scws@scws.am

« 12 » սեպտեմբեր 2014 թ. N 09/06/1738-14

Ձեր _____ 2014 թ. N _____

Եղեգնաձորի քնապահպանական
տեղեկատվական հասարակական Օրիուս
կենտրոնի համակարգող
պրն Ն. Բեգլարյանին

Հարգելի պարոն Բեգլարյան

Ի պատասխան Ձեր 2014թ. օգոստոսի 14-ի N Ե-09/14 գրության և ի լրումն «Տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 19.08.2014թ. N 01/06/1551-14 գրության տեղեկացում եմ, որ «Արփա-Սևան» ջրատարից Եղեգիս գետի ջրի բացթողումը հիմնականում պայմանավորված է «Արփա-Սևան» N2 թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացմամբ, որի արդյունքում N2 թունելը տարվա որոշ ամիսներին փակվում է և Կեչուտի ջրամբարի ջուրը՝ որպես նաև ջրալրում, տրվում է Եղեգիս գետին: Անհապաղ վերականգնողական աշխատանքները կատարվում են Արու-Դաբիի Ձարգացման Հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արփա-Սևան» թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում, որոնք սկսվել են 2010 թվականի սեպտեմբեր ամսից և նախատեսվում են ավարտել մինչև 2017 թվականի վերջ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ոռոգման նպատակով ջրօգտագործումը «ջրային օրենսգրքի և «ՀՀ ջրի ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ջրօգտագործման առաջնահերթ գերակայություններից է, ինչը թույլ է տալիս «Արփա-Սևան» թունելից դեպի Եղեգիս գետ ջուր բաց թողնել նաև ոռոգման նպատակներով, երբ տարվա որոշակի ամիսներին Եղեգիս գետի ջրի հոսքը հասնում է նվազագույնի:

Կից ներկայացնում եմ «Արփա-Սևան» թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊԿ-ի կողմից ներկայացված «Արփա-Սևան» թունելից Եղեգիս գետ բաց թողնված ջրի ծավալների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝



Վ. ԿԱԿՈՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Արփա-Սևան>> թունելից Եղեգիս գետ բաց թողնված ջրի ծավալների վերաբերյալ

(մլն.լս.ձ)

		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
1	Հունվար	-	-	6.872	4.533	3.591
2	Փետրվար	-	-	6.496	4.108	4.290
3	Մարտ	-	-	6.514	5.053	5.059
4	Ապրիլ	-	-	1.254	0.348	-
5	Մայիս	-	-	-	-	-
6	Հունիս	-	-	1.738	-	-
7	Հուլիս	0.825	1.380	3.609	4.708	2.449
8	Օգոստոս	5.005	2.354	7.168	6.550	6.220
9	Սեպտեմբեր	7.170	6.590	5.543	5.822	
10	Հոկտեմբեր	6.140	3.080	3.164	6.509	
11	Նոյեմբեր	5.706	0.600	3.565	7.354	
12	Դեկտեմբեր	5.890	1.260	4.411	6.651	